



**Հաշմանդամներ.
պատրանք և իրականություն**



Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Սույն հրապարակումն իրականացվում է
Բաց Հասարակության Ինստիտուտի և
Նիդեռլանդների Կառավարության
ֆինանսական միջոցներով



Ներածություն

Մեզանից շատերը շփոթվում են և չգիտեն, ինչպես վարվել՝ հանդիպելով հաշմանդամություն ունեցող մարդկանց: Հաշմանդամներն անհատակա-նություններ են, որոնք, բոլորի նման, ունեն հույզեր, նախասիրություններ, մտո-րումներ և զգացմունքներ: Պետք է կաշկանդվել հաշմանդամների հետ շփման ժամանակ: Վերաբերվեք նրանց այնպես, ինչպես կուզեք, որ Ձեզ վերաբերվեն, և չեք սխալվի: Իսկ եթե համոզված չեք, ինչ անել կամ ասել հաշմանդամի հետ հաղորդակցվելիս՝ ուղղակի հարցրեք:

Այս ձեռնարկում ընդգրկված են որոշ խորհուրդներ հաշմանդամությանն առնչ-վող վարվելակերպի և ճիշտ տերմինաբանության վերաբերյալ:

Ովքե՞ր են հաշմանդամները

Կարծրատիպերի համաձայն, նրանք ի ծնե արատներից կամ դժբախ-տության հետևանքներից տառապող, նորմալ դառնալու երազան-քով լի և այդ նպատակին հասնելու համար պայքարող, խնդիրները հաղթահարելու համար հերոսաբար մարտնչող՝ տուժած մարդիկ են:

Իրականում նրանք հայրեր և մայրեր, որդիներ և դուստրեր, եղբայր-ներ և քույրեր, աշխատողներ և գործատուներ, ուսուցիչներ և աշա-կերտներ, ընկերներ և հարևաններ են... Ինչպես և բոլոր մարդիկ, հաշ-մանդամները տարբեր են: Ամենից առաջ, նրանք **մարդ են**:

Վարվելակերպի ընդհանուր կանոններ

• Երբ ծանոթանում եք հաշմանդամի հետ, շատ բնական է սեղմել նրա ձեռքը. նույնիսկ նրանք, ովքեր դժվարությամբ են ձեռքը շարժում կամ օգտվում են պրոթեզից, միանգամայն կարող են բարևել Ձեզ աջ կամ ձախ ձեռքով, ինչը լիովին ընդունելի է: Եթե հաշմանդամը չի կարող ձեռք սեղմել, ողջունեք նրան գլխի շարժումով կամ ժպիտով:

• Եթե լավ չեք ճանաչում չափահաս հաշմանդամին, մի դիմեք նրան անունով և «դու»-ով:


• Հաշմանդամները ֆունկցիոնալ սահմանափակումներ ունեցող սովորական մարդիկ են: Պետք է երկար ժամանակ ակնապիշ նայել նրանց:

• Թույլ տվեք Ձեր երեխային շփվել հաշմանդամների հետ: Ցավալի է, երբ ծնող-ներն արգելում են իրենց երեխաներին հարցեր տալ հաշմանդամին կամ խոսել նրա հետ:

• Մի լարվեք և եղեք բնական:

Հարցրեք՝ օգնություն առաջարկելուց առաջ

Անձի հաշմանդամությունը չի նշանակում, որ նա մշտապես օգնության կարիք ունի: Ֆիզիկապես մատչելի միջավայրում հաշմանդամները, որպես կանոն, կարողանում են տեղաշարժվել ազատ և ինքնուրույն: Հաշմանդամները ցանկանում են, որ իրենց վերաբերվեն որպես ինքնուրույն մարդկանց: Օգնություն առաջարկեք միայն այն դեպքում, երբ դրա անհրաժեշտությունն ակնհայտ է: Եթե հաշմանդամը խնդրանքով դիմում է Ձեզ, ապա հարցրեք, թե ինչպիսի օգնություն է հարկավոր, և հետևեք ցուցումներին:



Անտեղի մի դիպչեք սարքավորումներին

Մի դիպչեք առանց անհրաժեշտության անվասայլակին կամ հենակին: Հաշմանդամի սարքավորումները հանդիսանում են նրա անձեռնմխելի տարածքը: Հենվել կամ կախվել անվասայլակից նույնն է, ինչ հենվել կամ կախվել նրա տիրոջից:

Հենակը ծառայում է բացառապես հաշմանդամին: Մի օգտագործեք այն իբրև օժանդակող գործիք (օրինակ, վարագույրը բացելու կամ փակելու նպատակով):

Դիմեք անմիջապես հաշմանդամին




Միշտ խոսեք անմիջականորեն հաշմանդամի, այլ ոչ թե նրան ուղեկցողի կամ սուրդոթարգմանչի հետ: Խոսեք բնական՝ այնպես, ինչպես խոսում եք ցանկացած մարդու հետ:

Հարգեք հաշմանդամի անհատականությունը: Մի տվեք անձնական, բժշկական կամ հաշմանդամության պատճառների հետ առնչվող հարցեր: Այնուամենայնիվ, հաշմանդամները սովորաբար հանգիստ են վերաբերվում երեխաների անմիջական հետաքրքրասիրությանը, նույնիսկ եթե նրանք հարցեր են տալիս:

Մի ենթադրեք

•Բոլոր մարդկանց նման, հաշմանդամները գիտեն իրենց կարողությունները: Հաշմանդամի փոխարեն մի որոշեք՝ արդյոք նա կարող է մասնակցել այս կամ այն գործողությանը:



•Հաշմանդամին փողոցում հանդիպելիս պետք չէ կարծել, որ նա անպայմանորեն ողորմության կարիք ունի:

Խնդրանքներին արձագանքեք սիրալիք



Եթե հաշմանդամը լրացուցիչ հարմարություններ է խնդրում Ձեր կազմակերպությունում, ապա դա չի նշանակում, որ նա դժգոհում է: Ընդհակառակը՝ նա իրեն հարմար է զգում տվյալ հաստատությունում և կարող է խնդրել այն, ինչ նրան պետք է: Եվ եթե նա ստանա դրական արձագանք, ապա շատ հնարավոր է, որ կվերադառնա և կպատմի իր ընկերներին Ձեզ մոտ ստացված որակյալ ծառայությունների մասին:

Տարբեր տեսակների հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ հաղորդակցում

Անվասայլակ օգտագործող և հենաչարժողական ապարատի խանգարումներ ունեցող այլ մարդիկ


Անվասայլակ օգտագործող մարդիկ ունեն հաշմանդամության տարբեր ծներ և տարբեր կարողություններ: Ոմանք կարող են օգտագործել իրենց ձեռքերը: Ոմանք էլ կարող են ելնել իրենց անվասայլակներից և որոշ տարածություն ուտքով անցնել:

- Անվասայլակ օգտագործող հաշմանդամները սովորական մարդիկ են, այլ ոչ թե սարքավորումներ: Մի կռացեք մարդու վրայով, որպեսզի սեղմեք մեկ այլ մարդու ձեռքը, կամ մի դրեք Ձեր իրերը սայլակին նստած հաշմանդամի ծնկներին:



- Եթե Դուք փորձեք օգնել հաշմանդամին բարձրանալ փողոցից մայթ առանց հրահանգներին հետևելու, ապա կարող եք գցել նրան անվասայլակից: Մի բարձրացրեք սայլակն արմնակալներից, քանի որ նրանք անջատվող մասեր են:

- Եթե հասարակական նշանակության շենքին հնարավոր է մոտենալ մի քանի ճանապարհներով, ապա անվասայլակով հաշմանդամների համար մատչելի ուղին միշտ պետք է խոչընդոտներից զերծ պահել: Հյուրանոցների, բանկերի և այլ հաստատությունների անվտանգության ծառայության և ընդունարանի աշխատողները պետք է տեղեկացված լինեն դեպի շենք տանող և շենքի ներսի առավել մատչելի ճանապարհների մասին:



- Թեքահարթակի վրա իրեր մի տեղադրեք: Մեքենայի առկայությունը թեքահարթակի դիմաց կամ նրա վրա լրջորեն դժվարացնում է հաշմանդամների մուտքն և ելքը:

- Հաշվի առեք անվասայլակ օգտագործող մարդկանց տեղաշարժվելու հնարավորությունները: Առարկաները հնարավորինս տեղադրեք իրենց հասանելիության սահմաններում:

- Երբ խոսում եք անվասայլակից օգտվող մարդու հետ, նստեք այնպես, որ Ձեր և զրուցակցի աչքերը լինեն նույն մակարդակի վրա: Եթե դա հնարավոր չէ, ապա կանգնեք համապատասխան հեռավորության վրա կամ ծնկի իջեք, որպեսզի հարմար լինի Ձեր աչքերը տեսնել առանց գլուխը վերև բարձրացնելու: (Փորձեք մի քանի րոպե անընդհատ նայել առաստաղին: Ձեր վիզը հավանաբար կցավի: Նման անհարմարություն Դուք պատճառում եք սայլակին նստած մարդուն, երբ երկար զրույցի ժամանակ ձիշտ դիրք չեք ընդունում):



- Եթե հիմնարկում սպասարկման սեղանը շատ բարձր է անվասայլակից օգտվողների համար, ապա աշխատողը պետք է շրջանցի այն և մոտենա հաճախորդին՝ ծառայությունը մատուցելու համար:

- Եթե Ձեր հիմնարկում հասարակական սանհանգույցը մատչելի չէ սայլակավոր հաշմանդամին, ապա թույլ տվեք նրան օգտվել աշխատողների համար նախատեսված սանհանգույցից:

- Որոշ մարդիկ ունեն ձեռքերի կամ դաստակների օգտագործման սահմանափակումներ: Պատրաստ եղեք առաջարկել օգնություն առարկաներ բռնելու կամ բարձրացնելու, դռներ և պատուհաններ բացելու, վաճառող ավտոմատ մեքենաներից և այլ սարքավորումներից օգտվելու ժամանակ:

Կույր կամ տեսողության խանգարումներ ունեցող մարդիկ

•Որոշ մարդիկ ունեն տեսողության խանգարումներ, որոնք ակնհայտ չեն: Պատրաստ եղեք օգնել, օրինակ, կարդալ որևէ բան:

•Մինչև ձեռքով բարևելը՝ բարևեք խոսքով և առաջարկեք կույր մարդուն մեկնել իր ձեռքը: Ներկայացեք՝ կույր մարդու հետ հաղորդակցվելուց առաջ: Ասեք նրան Ձեր և ներկա այլ անձանց անունները (և պաշտոնները, եթե դա տեղին է, օրինակ՝ անվտանգության ծառայության աշխատող, դռնապան, բուժքույր, ընդունարանի աշխատող կամ համակուրսեցի): Ներկայացրեք նաև կույր մարդուն բոլոր գրուցակիցներին:

•Եթե նոր հաճախորդը կամ աշխատողը կույր է կամ ունի տեսողության խանգարում, առաջարկեք նրան շրջել հիմնարկությունով Ձեր ուղեկցությամբ:



•Ուղեկցելու նպատակով առաջարկեք բռնվել Ձեր ձեռքից, այլ ոչ թե Դուք բռնեք: Նպատակահարմար է կույր մարդու ձեռքերը մոտեցնել աստիճանների բազրիքներին կամ աթոռին, եթե նա ցանկանում է իջնել կամ նստել:

•Երբ ուղեկցում եք տեսողության խնդիր ունեցող մարդուն, նկարագրեք շրջապատը, առկա խոչընդոտները, օրինակ՝ աստիճանները («դեպի վերև») կամ «դեպի ներքև»)

կամ փոսը մայթի վրա: Վտանգ կարող են ներկայացնել նաև պտտվող դռները, պահարանների կիսաբաց դռները և գլխի մակարդակի վրա պատին ամրացված և պատի հարթությունից դուրս եկող առարկաները, օրինակ՝ կահույքը, կախովի բույսերը կամ հեռախոսի խցիկը: Երբ ուզում եք նախազգուշացնել, օգտագործեք հրահանգ պարունակող կարճ արտահայտություններ (օրինակ՝ «Կանգնի՛ր»): «Զգուշացի՛ր» բղավելը կույր մարդուն ոչ մի բան չի ասի, որովհետև նա կշփոթվի և չի իմանա՝ կանգնի, վազի, թեքվի թե ցատկի:

•Երբ ուղղություն եք նշում, տվեք հստակ՝ տեսողությանը չվերաբերող տեղեկատվություն: Օրինակ, եթե մարդը ուզում է իմանալ սանհանգույցի տեղը, ապա ձիշտ է ասել «Գնացեք ուղիղ՝ միջանցքով մինչև վերջ և թեքվեք աջ», այլ ոչ թե «Սանհանգույցը գտնվում է խոհանոցից աջ»:

•Եթե Դուք պետք է կույր մարդուն ինչ-որ տեղ մենակ թողնեք, ապա առաջին հերթին տեղեկացրեք, թե որ կողմում է գտնվում ելքը, հետո թողեք պատի, սեղանի կամ այլ ուղենիշի մոտ:

- Անտեղի մի դիպչեք ձեռնափայտին: Եթե կույր մարդը ձեռնափայտը դնում է որևէ տեղ, առանց զգուշացնելու մի տեղափոխեք այն: Տեղեկացրեք կույր մարդուն, եթե ձեռնափայտը գտնվում է ճանապարհին կամ այլ՝ ոչ հարմար տեղում:

- Կույր հաճախորդների համար առաջարկեք կարդալ այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են ճաշացուցակը, համերգի ծրագիրը, հայտարարությունները և այլն:

- Երբ սնունդ եք մատուցում կույր մարդուն, ապա ասեք, թե սեղանի վրա ինչպես է այն դասավորված:

- Եթե կույր կամ վատ տեսնող մարդը կանոնավոր այցելում է Ձեր հիմնարկությունը որպես հաճախորդ կամ աշխատող, տեղեկացրեք նրան ցանկացած փոփոխության, օրինակ, կահույքի, սարքավորումների կամ այլ առարկաների տեղաշարժման մասին:

Խուլ կամ լսողության խանգարումներ ունեցող մարդիկ

Խուլ կամ լսողության խանգարումներով մարդկանց հետ հաղորդակցվելիս պետք չէ բղավել՝ դա անօգուտ է: Որոշ դեպքերում լսողության խանգարումներ ունեցող մարդիկ կարողանում են խոսքը ընկալել խոսակցի շուրթերի շարժումներից: Այդպիսի մարդկանց հետ խոսելիս՝ դեմքով կանգնեք դեպի լույսը և աշխատեք, որ Ձեր բերանի շարժումները պարզ երևան: Եթե Դուք լույսի աղբյուրին մեջքով եք կանգնած, ապա Ձեր դեմքը լավ չի երևա, ինչը կդժվարեցնի շրթունքներից կարդալը: Խոսեք դանդաղ և հասկանալի կերպով, նայեք զրուցակցի աչքերին, խուսափեք մաստակ ծամելուց, ծխելուց կամ ձեռքերով բերանը փակելուց:

- Այն դեպքերում (օրինակ՝ աշխատանքի ընդունման հարցազրույցի, բժշկի այցի, դատավարության ժամանակ), երբ ակնկալվում է մասնագիտական տերմինների օգտագործում, ժեստերի լեզվով խոսացողի հետ առավել արդյունավետ է հաղորդակցվել փորձառու սուրդոթարգմանչի միջոցով: Պարզ հաղորդակցման (օրինակ՝ ռեստորանում պատվերի ընդունման կամ հյուրանոցում սենյակի գրանցման) ժամանակ, որպես կանոն, բավարար է հարց ու պատասխան գրելը:

- Երբ օգտվում եք սուրդոթարգմանչի ծառայություններից, նայեք անմիջապես խուլ մարդու աչքերին: Հարցերն ուղղեք զրուցակցին, օրինակ՝ «Ի՞նչ եք ցանկանում, Հայկ», այլ ոչ թե թարգմանչին («Հայկին հարցրեք, ինչ է ցանկանում»):

- Խոսելուց առաջ համոզվեք, որ լսողության խանգարում ունեցող մարդն ուշադրությունը կենտրոնացրել է Ձեզ վրա: Դրա համար կարող եք ձեռքով նշան տալ կամ թեթև դիպչել զրուցակցի ուսին:



- Եթե վատ լսող մարդը չի հասկացել Ձեր ասածը, միտքը կրկնելու փոխարեն փորձեք վերաձևակերպել այն:

Խոսելու խանգարումներ ունեցող մարդիկ

- Մի ընդհատեք խոսելու խանգարում ունեցող մարդուն կամ մի ավարտեք նախադասությունները նրա փոխարեն: Եթե Դուք դժվար եք հասկանում, գլխով մի արեք, ուղղակի խնդրեք, որ կրկնի ասածը: Զրուցակիցը կգնահատի իրեն լսելու և հասկանալու Ձեր ջանքերը:

- Եթե դրանից հետո էլ չեք հասկացել, ապա խնդրեք, որ գրի:

Էպիլեպսիա ունեցող մարդիկ

- Էպիլեպսիան գլխուղեղի ֆունկցիայի խանգարում է, որն ուղեկցվում է պարբերական նոպաներով: Դրանք կարող են արտահայտվել ջղաձգություններով կամ գիտակցության կորստով: Մասնակի նոպաների ընթացքում որոշ մարդիկ կարող են քայլել կամ այլ շարժումներ կատարել անգիտակից վիճակում:

- Որևէ ձևով դադարեցնել նոպան հնարավոր չէ: Եթե էպիլեպսիա ունեցող մարդն ընկել է, համոզվեք, որ նրա գլուխը պաշտպանված է և սպասեք նոպայի ավարտին:

- Նոպայի ավարտից հետո մարդը կարող է իրեն զգալ ապակենտրոնացված և շփոթված: Փորձեք առանձնանալու հնարավորություն ընձեռել, որպեսզի մարդը կարողանա սթափվել:

- Հաշվի առեք, որ թարթող լույսերը որոշ մարդկանց մոտ կարող են առաջացնել նոպաներ:

Շնչառական խնդիրներ ունեցող մարդիկ

Շնչառական խնդիրներ (ասթմա, ալերգիա և այլն) ունեցող մարդկանց վրա կարող են բացասաբար ազդել օդում և շրջակա միջավայրում առկա թունավոր կամ գրգռիչ նյութերը: Հեղձուցիչ օդը, մաքրող հեղուկները, օծանելիքը, ջրափոշիները (սփրեյ, դեզոդորանտ), գորգերի փոշին կարող են առաջացնել ծանր հետևանքներ:

- Խուսափեք շնչառական խնդիրներ ունեցող մարդկանց կողքին հեղուկացրով մաքրել սեղանները, պատուհանները և այլ մակերեսները: Անհրաժեշտության դեպքում, օժեք հեղուկացիրը կտորի վրա (այլ ոչ թե ցողացրեք այն օդում), այնուհետև մաքրեք մակերեսը: Օգտագործեք հնարավորինս քիչ թունավոր նյութեր: Հաճախորդների հետ շփվող անձնակազմին խորհուրդ տվեք օգտագործել մարմնի խնամքի թեթև բուրավետ միջոցներ, օրինակ, օծանելիք (այդ թվում՝ սափրվելուց հետո օգտագործվող միջոցներ), մազի լաքեր, ձեռքի կամ երեսի քսուքներ:

- Միշտ օդափոխեք սենյակը, ինչը կարևոր է ոչ միայն շնչառական խնդիրներ ունեցող մարդկանց համար, այլ նաև կնպաստի բոլոր աշխատակիցների լավ ինքնազգացողությանը և աշխատունակությանը:

- Պասիվ ծխելը խիստ վնասակար է: Փակցրեք չծխելու մասին նախազգուշացումները սենյակներում, սանհանգույցներում և աստիճանավանդակներում: Հնարավորության դեպքում, հատկացրեք ծխելու համար առանձնացված տարածք:

Հոգեկան խանգարում ունեցող մարդիկ

Հոգեկան խանգարումը կարող է ազդել մարդու զգալու, մտածելու կամ այլ մարդկանց հետ շփվելու ունակության վրա: Նման մարդիկ դժվարությամբ են հաղթահարում առօրյայում հանդիպող խոչընդոտները: Նրանցից շատերը վտանգ չեն ներկայացնում այլոց համար: Գլխավոր խոչընդոտներից մեկը հասարակության վերաբերմունքն է հոգեկան խանգարում ունեցող մարդկանց հանդեպ: Քանի որ սա թաքնված հաշմանդամություն է, Դուք կարող եք նույնիսկ չնկատել, որ մարդն ունի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ:

- Լարվածությունը կարող է ազդել անձի վարվելակերպի վրա: Աշխատեք լարված իրավիճակներ չստեղծել նման մարդկանց հետ շփվելու ժամանակ:

- Հոգեկան խանգարում ունեցող մարդու նույնպիսի ժամանակ մնացեք հանգիստ և աջակցող: Հարցրեք, ինչով կարող եք օգնել անձամբ կամ կանչեք որևէ այլ մարդու, պարզեք՝ արդյոք կա դեղորայքի կարիք:

Ստավոր հատուկ կարիքներ ունեցող մարդիկ

Ստավոր հետամնացություն ունեցող մարդիկ դանդաղ են ընկալում և սովորածը դժվարությամբ են կիրառում կյանքի տարբեր իրավիճակներում:

- Խոսելուց օգտագործեք պարզ նախադասություններ, բառեր և հասկացություններ: Օգնեք հասկանալ բարդ միտքը՝ կրկնելով այն մաս-մաս:

- Խոսեք մտավոր հետամնացություն ունեցող չափահաս մարդկանց հետ այնպես, ինչպես խոսում եք նույն տարիքի ցանկացած մարդու հետ:

- Արագ որոշում ընդունելը կարող է դժվար լինել մտավոր խնդիր ունեցող մարդու համար: Այնուամենայնիվ, նման մարդիկ հաճախ կայացնում են ողջամիտ որոշումներ: Համբերատար եղեք և դրսևորեք հարգալից վերաբերմունք:

Թաքնված հաշմանդամություն ունեցող մարդիկ

- Միշտ հարգեք անձի պահանջները և կարիքները: Հաշմանդամության ոչ բոլոր ձևերն են ակնհայտ: Մարդը կարող է հարցեր տալ կամ գործել տարօրինակ թվացող ձևով: Նրա խնդրանքը կամ վարքը կարող է պայմանավորված լինել հաշմանդամությամբ:

- Ըմբռնումով մոտեցեք անսպասելի խնդրանքներին: Եթե արտաքինից առողջ մարդը խնդրում է Ձեզ գիշել տեղը տրանսպորտում կամ հիմնարկությունում, դրա պատճառը կարող է լինել թաքնված հաշմանդամությունը, օրինակ՝ սրտի հիվանդությունը, հետվիրահատական վիճակը, որովայնի կամ ողնաշարի խնդիրը և այլն:

•Մի զարմացեք, եթե մեքենայի մեջ նստած՝ արտաքնապես հաշմանդամություն չունեցող մարդը խնդրում է որևէ բան գնել մոտակա կրպակից, կամ ծովում լավ լողացողը ափին մոտենալուն պես անսպասելի խնդրանքով է դիմում Ձեզ՝ գրկել նրան և ձեռքերի վրա տանել լողափ: Դրա բացատրությունը կարող է լինել հետևյալը. Դուք հանդիպել եք ողնուղեղի վնասվածք ունեցող մարդու, որն, առաջին դեպքում, պարզապես նստած է ավտոմեքենայում և նրա հաշմանդամությունը տվյալ պահին չի երևում, իսկ երկրորդ դեպքում՝ հաշմանդամը լավ լողորդ է և լողալիս օգնության կարիք չունի, բացի ջուր մտնելու և ափ դուրս գալու պահերից:

Ճիշտ տերմինաբանություն

Հաշմանդամների իրավունքների միջազգային շարժումը ճիշտ է համարում հաշմանդամության հետևյալ ձևակերպումը. «Հաշմանդամությունը հասարակության մեջ առկա անբարենպաստ պայմանների հետևանք հանդիսացող՝ ֆիզիկական, մտավոր, զգայական կամ հոգեբանական շեղումներով մարդու գործունեության արգելքները կամ սահմանափակումներն են, որոնք նման մարդկանց զրկում են ակտիվ կյանք վարելու հնարավորությունից»: Հետևաբար հաշմանդամությունը սոցիալական անհավասարության վառ օրինակ է: Այն ոչ թե բժշկական, այլ սոցիալական հասկացություն է: Հաշմանդամության սոցիալական մոդելի ենթատեքստում տրամաբանական է օգտագործել համապատասխան տերմիններ, որոնք չեն ստեղծում բացասական կարծրատիպեր և չեն վիրավորում հաշմանդամի արժանապատվությունը:

Ինչպես ռասայական և ազգային նկարագիր տալու դեպքում, այնպես էլ հաշմանդամ մարդու համար որևէ տերմինի ընտրությունը հաճախ հիմնվում է կարծրատիպերի, «հանդուրժողական» վերաբերմունքի և այլ զգայական ընկալումների վրա: Շատ հաշմանդամ մարդիկ, ինչպես նաև նրանց ներկայացնող կազմակերպություններ դեմ են այնպիսի տերմինների օգտագործմանը, ինչպես, օրինակ, «տուժած», «գամված», «զոհ» և այլն:

Հատկապես կարևոր է ճիշտ տերմինների օգտագործումը լրագրողների կողմից: Երբեք մի հիշատակեք մարդուն բացառապես ըստ նրա հաշմանդամության՝ կաղ, խուլ-համր, կույր, մտավոր հետամնաց, հոգեկան հիվանդ, անվասայլակին գամված, առողջ (խոսելով ոչ-հաշմանդամի մասին) կամ նորմալ (ի տարբերություն հաշմանդամի): **Ճիշտ տերմինաբանության հիմնական սկզբունքն է՝ «Չեշտը դնել մարդու, այլ ոչ թե նրա հաշմանդամության վրա»:**

• Հաշմանդամության յուրաքանչյուր դեպքում խուսափեք բացասական, հուսահատող այնպիսի բառերից, ինչպիսիք են «զոհ» կամ «տուժած»: Օգտագործեք «ՁԻԱՀ-ով հիվանդ մարդ» կամ «ողնուղեղի վնասվածք ունեցող մարդ», այլ ոչ թե «ՁԻԱՀ-ի զոհ» կամ «ողնուղեղի վնասվածքից տուժած մարդ» բառակապակցությունները: Եթե հանդգնված չեք բառի կամ արտահայտության կիրառման նպատակահարմարության մեջ՝ հարցրեք:



• Օգտագործեք «հաշմանդամություն ունեցող մարդ», այլ ոչ թե «հիվանդ, անլիարժեք, կաղ» և նման արտահայտությունները:



• Օգտագործեք «անվասայլակից օգտվող մարդ», այլ ոչ թե «անվասայլակին գամված մարդ» արտահայտությունը: Անվասայլակը մարդուն հնարավորություն է տալիս ինքնուրույն ու արագ տեղաշարժվել և մասնակցել հասարակական կյանքին: Այն ընդլայնում, այլ ոչ թե սահմանափակում է նրա հնարավորությունները:

• Խուսափեք «թերհաս», «խեղանդամ», «ֆիզիկական արատ ունեցող» և այլ հնացած, կարծրատիպային տերմիններից:

• Ընդունելի է իդիոմատիկ արտահայտությունների օգտագործումը, երբ խոսում եք հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ: Օրինակ, «Կտեսնվենք» արտահայտությունը ամենևին վիրավորական չէ, երբ խոսում եք կույր մարդկանց հետ, քանի որ նրանք նույնպես օգտագործում են նման արտահայտությունները:

• Լսողությունը կորցրած, բայց խոսելու ունակությունից չզրկված մարդկանց դեպքում ճիշտ է օգտագործել «վատ լսող մարդ» արտահայտությունը: Եթե մարդը չի լսում և խոսում, օգտագործեք «խուլ մարդ» արտահայտությունը:

Երբ խոսում կամ գրում եք հաշմանդամների մասին

Օգտագործեք չեզոք բառեր և հասկացություններ

Հաշմանդամ, հաշմանդամություն ունեցող մարդ, ֆունկցիոնալ խանգարում ունեցող մարդ, սահմանափակ ֆունկցիաներ

Ոչ-հաշմանդամ, սովորական (տիպային) մարդ, կարող է քայլել, տեսնել, լսել և այլն (ի տարբերություն հաշմանդամի, կույր, վատ լսող մարդու)

Անվասայլակից օգտվող մարդ, ողնուղեղի վնասվածք ունեցող մարդ, սպինալ հաշմանդամ, կաղում է

Ի ծնե հաշմանդամություն, մանկուց հաշմանդամ

Մանկական ուղեղային կաթված (կամ նման այլ բան) ունի

Տարել է պոլիոմիելիթ, պոլիոմիելիթի հետևանքով հաշմանդամություն ունի, հաշմանդամ է դարձել երկրաշարժի (վթարի) արդյունքում

Մտավոր հետամնացություն ունեցող մարդ

Զարգացման հապաղում ունեցող երեխա, դանդաղ ընկալող երեխա, մտավոր հատուկ կարիքներ ունեցող մարդ

Դաունի համախտանիշով մարդ (երեխա)

Էպիլեպսիա ունեցող մարդ, ցնցումներին ենթակա մարդ

Հոգեկան հիվանդ մարդ, հոգեկան խնդիրներ ունեցող մարդ, հոգեկան խանգարում ունեցող մարդ

Չտեսնող, վատ տեսնող կամ կույր մարդ

Լսողության խանգարում ունեցող մարդ, վատ լսող մարդ (երեխա), խուլ մարդ

Շփման դժվարություններ ունեցող մարդ, մարդ, որը չի կարող խոսել, համր մարդ

Խուսափեք կարծրատիպեր ստեղծող բառերից և հասկացություններից

Հիվանդ, անլիարժեք, տուժած, սահմանափակ կարողություններով մարդ

Նորմալ, առողջ (ի տարբերություն հաշմանդամի)

Անվասայլակին գամված, կաղ

Ի ծնե արատ, դժբախտություն, արատ ունեցող

Տառապում է մանկական ուղեղային կաթվածով

Տառապում է պոլիոմիելիթով (պոլիոմիելիթի հետևանքներից), երկրաշարժի (վթարի) զոհ

Թերհաս, մտավոր թերի

Թերամիտ, «արգելակված»

«Դաուն»

Էպիլեպտիկ, դիվահար, ցնցումավոր

Հոգեկան

Կույր, լրիվ կույր

Խուլ-համր, խուլ

Համր

Կոնտակտ տեղեկություններ
Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռախոս՝ (37410) 522170
Վեբ-կայք՝ www.unison.am
Էլ. փոստ՝ unison@unison.am

Հեղինակ
Արմեն Ալավերդյան

Ձևավորում և նկարներ
Դավիթ Բաբայան

